ՊԵՏՐՈՍ ՆԱԽԻՋԵՎԱՆՑՈՒ «ԱՂՕԹԱԿԱՆ ԲԱՆՔ» ՊՈԵՄԸ

Բանասիր. գիտ. դոկտոր Շ. Լ. ՆԱՀԱՐՅԱՆ

Պետրոս Նախիջևանցու «Աղօթական բանք» պոեմը XVIII դարի հայոց կրոնաազգային վերաբերնացող շարժման դրական երևույթներից մեկն է, շարժում, որի ալորտներում ուժեղանում էր հետաքրքրությունը անցյալի մտավոր ժառանգության նկատմամբ, և երբ ի թիվս հայ դասական հեղինակների նշանավոր երկերի, կորանում էր Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» հանճարեղ պոեմի ազդեցությունը[1]։ Հարկավ, մենք չենք կարող բաժանել Նախիջևանցու պոեմի վերաբերյալ ժամանակի մատենագետ Թադեոս արքեպիսկոպոսի այն հայացքը, թե դա է «...զգիրս աղօթից իբրև համաչափ աղօթարանի Նարեկացւոյն»[2]։ Նոր «Մատեան» գրելը թվում է թե ժամանակավրեպ էր և համարձակ բայլ. «Թէպէտ ի վեր էր այն քան դկար մեր» (էջ 8գ),—խոստովանում է նաև հեղինակը։ Այսուամենայնիվ, Նախիջևանցու «Աղօթական բանք» պոեմը հայոց XVIII դարի կրոնաքաղաքական վիճակի յուրահատուկ ողբն է, հայ եկեղեցական մտավորականությանը առաջնորդող, խորապես անհատական մի նոր ստեղծագործություն.

Եւ ա՜ոդ, առ ձեզ աղաղակեմ տխրալից դիմօք,
ողբալից աչօք և թախծագին սրտիւ,
ունելով ի ձեռին մատեանս ողբոց
և դիրս զանձնէ ամբաստանութեան
լցեալ ներքոյ և արտաքոյ ողբովք և կոծովք... (էջ 158ա)։

Յոթ տարբեր մասերից, շուրջ 120 գլուխներից, ավելի քան 10.000 տողից, հարյուրավոր ինքնատիպ, բազմաոճ արձակ և չափածո, հանգավոր և անհանգ (շարքերով միմյանց հետ կապակցված) երգերից (աղոթք, աղերս, ողբ, շարականակերպ տաղ և այլն) բաղկացած մի ստեղծագործություն է այն, որի որոշ հատվածներ, գրչագիր օրինակներով, տարածվել են նաև իբրև ուրույն երգ-բանաստեղծություն։ «Աղօթական բանքը» ունի առաջաբան, ինքնակենսագրական ակնարկներով ու տեսիլներով համեմված ստեղծագործական պատմություն։ Տեսիլները կապվում են Նարեկացու հետ։ Պ. Նախիջևանցին դեռ պատանեկան հասակից հափշտակվում է Նարեկացու «Մատեանով», անդուլ տքնությամբ կարդում է այդ երկը. մտորում նրա շուրջը և մի գիշեր երազում նրան այցի է գալիս բանաստեղծը։ Պատանին աճապարանքով իր ձեռքն է վերցնում «Մատեանը», ընդառաջ գնում հյուրին, ղլխաբաց ծունկի գալիս նրա առջև և խնդրում՝ «զդասս ասել»։ Նարեկացին քաղցրահայացք նայում է պատանուն և իր «լուսածորան» բերանով սկսում է դասը. հենց այդ պահին երազն ընդհատվում է։ Երկրորդ տեսիլը Նախիջևանցին տեսնում է արդեն հասուն տարիքում, երբ նա Ղրիմի Ս. Օգսենտի վանքի առաջնորդն էր։ Օտարության մեջ դեպի հայ մատենագիտությունն ունեցած սիրուց տառապող բանաստեղծի աչքի առջև վերակենդանանում են աղգի նշանավոր մատենագիր-

---

1 *Պետրոս Նախիջևանցու մասին տե՛ս «Պ. Նախիջևանցին և XVIII դարի հայ վերանորոգվող հոգևոր երգը» հոդվածը («Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 3, էջ 128—147)։ Աղոթամատյանը անտիպ է. մեզ է հասել մի շարք դրչագիր օրինակներով։ Հիմնականում օգտագործվում ենք Մաշտոցի անվ. Մատենադարանի (ՄՄ) № 10 ձեռագրից (1771 թ.). այն, թերևս, հեղինակի ինքնագիր, առաջին, օրինակն է (այսուհետև այս ձեռագրից արվող մեջբերումների էջերը կնշվեն տողամիջում)։*

2 *ՄՄ, ձեռ. № 6744, էջ 159ա։*

ների դեմքերը։ Նա երազում տեսնում է Ներսես Լամբրոնացուն. «Զի անձկաւ սրտիւ առ գրեանս մեր ունիս»,— ասում է նրան Լամբրոնացին,— առ քեզ զաղօթիցս Մատեան Նարեկացւոյն, զայն ընթերց ստէպ» (էջ 6ա)։ Նախիջևանցին մեծ հափշտակությամբ կարդում է «Մատեանը» և խորապես հուզվում. արտասվում. «արդեօ՞ք և Նարեկացին,— մտածում է նա,— աղօթել յիւրում սովաւ այսպէս արտասուէր»։ Եվ հենց այդ պահին նրա առջև երևում է մի գեղեցիկ բլրակ, որի ստորոտից բխում է երկակն հորդառատ աղբյուր։ Մինչդեռ նա սքանչացած էր այդ անընմբռնելի տեսարանով, մի աներևույթ ձայն նրան ասում է. «Զի՞ զարմանաս, հայեաց ի վեր և տես, զի այդ աղբիւր երկակն է արտասուք սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն, որ վերա բլրակիդ աղօթէ...» (էջ 2բ)։ Այս տեսիլի տպավորության տակ Նախիջևանցին գրիչ է վերցնում և սկսում է գրել իր մատյանը՝ «Աղօթական բանք ընդ աստուծոյ ի խորոց սրտէ, սրտաբէկ զղջմամբ, յատկապէս կոչեցեալ Ապաշխարարան» (էջ 6ա)։

Նախիջևանցու տեսիլների բովանդակությունը, կերպարների հոգեվիճակը ներկայացնող արտահայտությունները, ինչպես նաև երկի ընդհանուր խորագիրը կանխապես թելադրում են, որ «Աղօթական բանք» պոեմի վրա խոր կնիք պետք է թողած լինի Նարեկացու «Մատեանը»։ Այս ուշագրավ հարցի քննությունը թողնելով մի այլ առիթի, համառոտակի անդրադառնանք այն խնդիրներին, թե աղոթական վերացական ձևերի մեջ, աստվածաբանական նյութի փակուղում, տեսական և գործնական ի՞նչ հարցեր է բարձրացնում հեղինակը, ո՞րն է դրանց մեջ առաջնայինը, ինչո՞վ է պոեմը առնչվում հայոց ժամանակակից կյանքի հետ, ովքե՞ր են երկի, այսպես կոչված, հերոսները, ո՞րն է պոեմի փիլիսոփայական ատաղձը և, վերջապես, ի՞նչ նոր խոսք է բերում «Աղօթական բանքը» XVIII դարի վերանորոգվող հոգևոր բանաստեղծության մեջ։

Նորը և առանձնահատուկը պոեմի արվեստի ճանաչողական, քննական բնույթն է։ Մի գիծ, որով բարձրանում է XVIII դարի հոգևոր բանաստեղծության գառափարական կշիռը։ «Աղօթական բանք» պոեմի քնարական գլխավոր հերոսի (եթե կարելի է այսպես ասել) հոգու, մտքի, աշխարհըմբռնումների վրա ներազդել է երկնային և երկրային, նյութական. առարկայական և վերացական կյանքը՝ երկուստեք խորունկ և համամասնաբար. երգչին առաջնորդում են՝ մի կողմից սուրբ երրորդության, սուրբ հայրերի, մարգարեների, առաքյալների՝ Դավիթ, Պողոս, Դիոնիսիոս, Գրիգոր Աստվածաբան, հավատն ու ուսմունքը, մյուս կողմից՝ հին հունաց և հայոց մեծագույն հեղինակների՝ Արիստոտել, Պլատոն, Պորփյուր..., Դավիթ Անհաղթ, Գրիգոր Նարեկացի, Ներսես Շնորհալի, Ներսես Լամբրոնացի և այլոց, արվեստն ու փիլիսոփայությունը։

Բանաստեղծի իմացական աշխարհում տեղի է ունենում ներքին, հոգեբանական մարտ, իրական և վերացական հասկացությունների թեժ սլայքար, և հեղինակը ամեն ջանք գործադրում է լուծելու այդ պայքարը, վերացնելու նրանց միջև եղած անջրպետը։ Այս պայքարի մեջ են բացորոշվում պոեմի իրական, իմացական հիմքերը։ Բանաստեղծության շրջանակներում, վերստին և առավել խորությամբ, արծարծվում են Դավիթ Անհաղթի «մտաց և հանճարոյ ընդունակ» բանական դոյի կատարելության խնդիրը, մարդու խնդիրը, որը, ըստ երգչի, լինելով «զարդն տիեզերաց», դուրս է եկել բնությամբ կանխորոշված սահմանից՝ «ըստ սահման բնութեան արտաքս վաղելով», հավասարվել «անբանից ջոկիցս»։

Աղոթամատյանի ողջ հյուսվածքի մեջ, ծայրից ծայր, հոգու մտքի, գաղափարի և մարմնի անդուսպ կրքերի, վնասակար ցանկությունների պայքարն է մարմնավորվում. բանականի և անբանի, չարի և բարու, օգտակար և վնասակար հարաբերությունների չափն ու կշիռն է որոշվում և, որ գլխավորն է, մարդու վերափոխության ուղիներն են նշվում։ XVIII դարի բանաստեղծը տրատավոր, անկատար մարդու կատարելության հիմնական միջոցներից մեկն

է համարում աստվածանմանությունը. հայացք, որ շուրջ տասներկու-տասներեք դար շարունակաբար զբաղեցրել է հայ դասական գիտության ու փիլիսոփայության մտքի ներկայացուցիչներին։ Հիմք ընդունելով սուրբ հայրերի, Պլատոնի և Դավիթ Անհաղթի փիլիսոփայական այն բանաձևը, թե՝ աստված մարդուն ստեղծել է «ի պատկերի իւրում», ուրեմն մարդը պարտավոր է նմանվել առածուն նաև էությամբ, Նախիջևանցին ձգտում է հավատքի միջոցով ճանաչել իրերի, գոյերի մարդկային հարաբերությունների աշխարհը, և այդ եղանակով նրան հաջողվում է հասնել ճշմարտությունների.

Կատարեա՛ զիս, Տէ՛ր, լինիլ քեզ նման,
որքան որ տանի իմս էութիւն.
բանկի տիրապէս կատարեալ դու ես էութիւն,
որոյ ո՛չ յաւելումն և ոչ պակասումն կարելի է գոլ... (էջ 47ա)։

Մարդը իր մեջ կրում է աստծու ուրվականը և ոչ նրա բուն աստվածային էությունը, բողոքում է բանաստեղծը։ Իսկ ո՞րն է բանաստեղծի պատկերացմամբ երկնային թագավորի բնությունը, էությունը.

Ո՛վ անմարմին էութիւն,
Աննիւթ գոյութիւն.
Անկիրք բնութիւն.
Անչափ մեծութիւն.
Անորակ իսկութիւն,
Անձև տեսակցութիւն...3

Աննյութական, ամենակատարյալ գոյին նմանվելու ձգտումը, աստվածանմանության խնդրի վերարծարծումը հասարակությանը բարոյապես բարձրացնելու մի գիծ էր, որ վարում էին նաև նոր ժամանակների գիտունները։ Այս խնդրում Նախիջևանցին առաջնորդ ունի սուրբ հայրերին, Պլատոնին, Դավիթ Անհաղթին և Նարեկացուն։ Մինչդեռ հնում, նկատում է Նախիջևանցին, իմաստունները վիճում, հակադրվում էին միմյանց, թե «զի՞արդ հնարէ աստուծոյ ունիլ որդի կամ մարդոյ նմանիլ աստուծոյ»,— Պղատոնն ահա,— շարունակում է նա,— սահմանում է իր հռչակավոր թեզը. «Աստուստ առ ի սահմանելն Պղատօնի զիմաստասիրութիւնն նմանութիւն աստուծոյ ըստ կարողութեան մարդկան, ընպահակեալ նախնի քերթողաց կատակէին յասելն՝ ո՛չ է նման ցեղ աստուածայնոց անմահից զետնակոխած մարդկան, որպէս վկայէ Անյաղթ Դաւիթն ի գիրս Սահմանաց»4։ Իսկ Նարեկացին,— նկատում է բանաստեղծը,— իր հիացմունքն է հայտնում այդ առթիվ. «Յիրաւի, ճառ մեծ և զարմացման արժանի, ընդ որ հիացեալ Գրիգորի Նարեկացւոյ, ասէ՝ և որքան մարթ է դմարդն Աստուծոյ նմանեցուցանել»5։ Նախիջևանցին հենվում է Պլատոնի և նրա համապատասխան հայացքները զարգացնող Դավիթ Անհաղթի ու Նարեկացու վրա, և նորից տեսակետորեն պաշտպանելով աստվածանմանության խնդիրը՝ հայոց ժամանակի կյանքին համախոս նոր ուղիներ է մատնանշում։ Ուղիներից ամենաառաջինը, որ կտեսնենք ստորև, հայոց հոգևոր կենտրոնի՝ Էջմիածնի դերի բարձրացումն է։ Փիլիսոփա-բանաստեղծը աստվածանմանության հարցին նվիրված գրքում (լույս է տեսել 1827 թ. Մեսրոպ Թաղիադյանի աշխատասիրությամբ) նշում է այն ուղիները, որոնցով մարդը կարող է նմանվել աստծուն. «Նախ աստուածաբանական խնդիրսն եղաք և ապա զբարոյականսն ընդ սմին հարմարեսցաք... մերթ տեսականօքն, մերթ գործնականօքն հրճուեսցին...»6։ Նախիջևանցին այս հարցը պոեմում զարգացնում է,

3 ՄՄ, ձեռ. N 6532, էջ 33ա։

4 Գեորգ Նախիջևանցի. Աստուածանմանութիւն. Կալկաթա, 1827, Առաջաբան։

5 «Գրիգորի Նարեկացւոյ Վանից վանականի Ողբերգութիւն». Վենետիկ, 1851, էջ 400։ Գեորգ Նախիջևանցի. Աստուածանմանութիւն, Առաջաբան։

6 Գեորգ Նախիջևանցի. Աստուածանմանութիւն, էջ 252։

ինչպես նկատեցինք, երկու պլանով. երկնայինի և երկրայինի զուգակցությամբ՝ աստծու և նրա մարդացած որդու՝ Քրիստոսի ուսմունքի բարոյական չափերի մատուցմամբ և երկրորդ՝ ժամանակակից հայ հասարակական, եկեղեցական կյանքի առանձին հարցերի մեկնաբանությամբ՝ հակադրության եղանակով։ Այս առումով Նախիջևանցու «Աղօթական բանք» պոեմը չի կարելի ժամանակավրեպ համարել։ Հայոց համար ստեղծված իրավաքաղաքական անձուկ վիճակը, մահմեդականացման սպառնացող վտանգը թույլ էին տալիս վերանայելու աստվածանմանության խնդիրը՝ իբրև հայ ժողովրդի գոյատևման, ինքնապաշտպանության միջոց, իբրև մարդու երևակայությամբ ստեղծված ամենակատարյալի՝ աստծո օրինակով, մարդուն՝ բանական, անկատար դոյին կատարելության հասցնելու գեղագիտական հայացք։ «Ի խորոց սրտի» աստծո հետ ունեցած ողջ զրույցի ընթացքում, կենսական թե վերացական, երկրային թե երկնային գաղափարների շուրջը դատելիս բանաստեղծը առաջնորդվում է նաև իմացաբանական այն բանաձևով, թե զգացող օրգանների գերազանց, չափից ավելի ակտիվությունը ապականում, ոչնչացնում է բուն զգայությունը. ուստի անհրաժեշտ է չափավորություն բոլոր պարագաներում. «Գերաչանցութիւն զգալիցն ապականէ զգայութիւն, որպէս ասեն փիլիսոփայք, վասն որոյ պարտ է լինել չափաւորութիւն ո՛չ միայն ի մէջ զգալիսն զգայութեանց, այլև ի մէջ իմանալիսն իմացութեան, զի որպէս զգալիսն զգայութեան, այնպէս և իմանալիսն առ իմացութեան»[7]։ Բարոյափիլիսոփայական այս նշանաբանով է առաջնորդվում Նախիջևանցու «Աղօթական բանք» պոեմի քնարական հերոսը, որը ներկայանում է առաջին դեմքով. նա է մարդ բանականի հավաքական այն կերպարը, որ առաջ է մղում աղոթամատյանի նյութը։ Բանաստեղծությունը վարելու այս եղանակը հատուկ է նաև հոգևոր երգերին, շարականներին և աղոթքներին։ Պոեմի այս առանձնահատկության մասին խոսում է նաև ինքը հեղինակը. «Քանզի գլխաւոր մասն ապաշխարութիւն է զղջմամբ, սրտի խոկումք առ աստուած և թէև զինէ բողոքէ, բայց ընթերցօղն վարկածի զինքենէ» (էջ 2բ)։ Ի՞նչ է կատարվում. բանաստեղծը առանձին-առանձին ներկայացնում է սրբերն, մարգարեների աստվածային շնորհները, ներբողում նրանց և ապա, դարձյալ իր ասի միջոցով, մարմնավորում է մերթ բանական գոյին՝ տիեզերքի մարդուն առհասարակ, մերթ էլ իրական, ժամանակակից մարդուն, հոգևոր և աշխարհիկ իշխողներին, ընտրյալներին՝ թագավոր, եկեղեցու առաջնորդ, վարդապետ, քահանա, սարկավագ, դպիր և այլք, ցույց տալիս նրանց առաքինությունները և թերությունները։ Այստեղ էլ, ինչպես քնարական մի շարք բանաստեղծություններում («Յաւուր նեղութեան», «Յաւուր երաժշտութեան», «Երգ ձմեռացեալ ծերոց», «Երգ զինաւորաց», «Երգ բարեկենդանի», «Աղերս մեծատանն» և այլն), Նախիջևանցին խոսում է երկնային թագավորի հետ, բացում է նրա առջև իր զգայուն հոգու մեծ աշխարհը, թվում իր գործած մեղքերը, սխալները, զղջում, խոստովանում, որոշում իր պատժի չափերը և օգնություն հայցում...— Օգնի՛ր, տեր, որպեսզի մարդը կրկին գտնի իր սահմանը, բանականության հզոր ուժով ճանաչի ինքն իրեն, ապաշխարելով, քննադատելով նայի իր շուրջը և ետ կանգնի սխալ ճանապարհից։

Զորացո՛ զհոգիս հնազանդել զմարմին,
Զորացո՛ զմիտս դիւրութեամբ թագաւորել յիս[8]։

Որպես կատարյալ աստվածաբան և բնախոս-փիլիսոփա, Նախիջևանցին քննում է մարդու էությունը, բացահայտում նրա ներքին և արտաքին, ոգեյական և իմացական, երկնային և երկրային, բնական և ստացական հատկանիշները, շնորհները, առանձնահատկությունները։ Բանաստեղծին զարմանք և հիացմունք է պատճառում մտածող, բանական էակի ներդաշնակությունը, հորինվածքի համամասնությունը, ամբողջականությունը՝ արտաքին զգայությունը-

---

7 ՄՄ, ձեռ. N 6744, էջ 10ա։

8 Նույն տեղում, ձեռ. № 6532, թերթ 30ա։

ների խումբը՝ իբրև հրահանգիչ սահմանավերջ կալվածքի (մարմնի), հասարակ զգացողությունը՝ իբրև բռնակալ, տրամախոսությունը՝ իբրև զանազանող չարը բարուց, բանականությունը՝ իբրև արդարադատ քննիչ, միտքը՝ իբրև թելադրող, կամքը՝ իբրև հրամայող...

Կազմեցէր զխումբս արտաքին զգայութեանց,
որպէս զդէտս սահմանավերջ ամրոցաց կալվածութիւն
թագաւորութեան՝ ազգարարութիւն ներսամտելոց.
Կացուցէր զհասարակ զգայութիւն՝ որպէս բռնակալ,
կալնուլ զօրութեամբ զառ ի ներքս դիմեալսն արտուստ.
Զերևակայութիւնն՝ որպէս բանտապահ՝ պահպանել յինեան զհոյլս տեսակաց.
Զտրամախօհութիւնն՝ որպէս զանազանող՝
տարբերել և որոշել զչարն ի բարւոյն.
Զբանականութիւնն՝ որպէս զիւթադատ քննել իրամամբ.
Զմիտսն՝ որպէս ենթադատող և վաճառատու, դատաքննել զկացուրդ դիւանին.
Եւ զկամսն՝ որպէս հրամայող ի գործածել և կատարել զվաճառեալսն.
Եւ եթէ զրարի իբէ նկեալն, զցանկականն զօրութիւն
համոզող առ յօժարասիրտ գրկելու զնոյն.
Իսկ եթէ չար իցէ զցասմականն տարահամոզող ի սարտուցանել...
Եւ զայս ամենայն սքանչելի տրամախօսութեամբ յօրինեցէր ի յիս,
Զի ես թերևս օժանդակութեամբ այսքան կարդաւորեալ զօրաց նպաստեալ.
Կարիցէի անևրկեան մտօք ընտրել զբարին և խորշիլ ի չարէն... (էջ 28բ)։

Բայց, երբ մարդու թույլ կամքով խախտվում է զգայականի, մարմնականի և բանականի, մտքի, հոգու հարաբերությունների չափը, երբ բանականությունը իր դիկավար, առաջնորդ դերը զիջում է մարմնին, երբ խախտվում են ընությունից ի սկզբանե մարդուն տրված տրամախոհության, ներդաշնակության կենտրոնները, և երբ մարդը չճանաչելով, չգնահատելով իր արժանիքները, բանականությունից ձերբազատված, հանձնվում է ընչաքաղցության տարերքին, դառնում մարմնի գերին, կորցնում է ամեն ինչ.

Եւ, որ զինն զօրք ապստամբեցան,
Եւ ես ընդ նոքօք ստրուկ կարգեցայ...
Վաղ՝ յ ինձ բիւրիցս.
Զի գոլով երբէմն զօրեղ և այժմ եմ տկար,
Երբէմն թագաւոր և այժմ եմ ծառայ,
Երբէմն ահաւոր դիւաց և այժմ եմ խաղալիկ,
Երբէմն լուսաւոր և այժմ եմ խաւար,
Երբէմն մաքուր և այժմ եմ աղտեղի,
Երբէմն արդար և այժմ եմ մեղաւոր,
Երբէմն հոգևոր և այժմ եմ շնչաւոր,
Երբէմն ոսկի և այժմ եմ կապար,
Երբէմն իշխող զգայութեանց և այժմ եմ գերի... (էջ 29ա)։

Հոգու և մարմնի պայքարը, ինչպես կտեսնենք նաև ստորև, բարոյական աստվածաբանության չափերի մեջ, հասարակական, կենսական, ազգային հիմքեր ունի... Աղոթքը հիմնավորում է այն հայացքը, թե զգայական անսանձ կրքերը, նյութասպաշտությունը, ընչաքաղցությունը ծնում են գաղափարտզուրկ, ժողովրդի վիճակի, ճակատագրի նկատմամբ անտարբեր մարդկանց։ Նրանք՝ այդ անսիրտ, անզգա, անգութ էակները վայր են դնում բոլոր դենքերը, փոխանակ պայքարելու՝ համատեղվում են, փոխանակ զորանալու՝ նվաղում են, փոխանակ շնչելու՝ անէանում են, չեն աշխատում, չեն ընդվզում, չեն ձգտում վերափոխվելու, վերաստեղծվելու, այլ ենթարկվում են ծուլության ախտին, մեկուսանում, ներանձնանում են, ո՞չ հոգևոր կոչում, ո՞չ

հասարակական կյանք, ո՞չ ազգային գաղափար, ո՞չ հավատք, ոչինչ չի մտահոգում նրանց։

Քանզի իբրև զանդամալոյծն բազմամեայ, անկեալ դնիմ յանկողին տրտմութեան.
անցանէ ամառն և ես ո՞չ բժշկիմ.
գայ աշունն և ես ո՞չ հոգամ զապրուստ ձմեռան.
հասանի ձմեռն և ինձ տիրէ սաստիկ սով հոգւոյ.
ժամանէ գարունն և ես ի ձմեռային ընդարմական թմրութենէ ո՞չ բսթափիմ.
Աշխատի սրջունն և ես չամաչիմ.
գործի մեղուն և ես չպատկառիմ.
ծագէ արեգակն և ես ի գիշերի մեղաց թանձրութենէ խոր գամ.
ծասանչ տիւն և ինձ ծուլութեան գիշեր յաջորդէ... (էջ 120ա—բ)։

Աղոթամատյանի ամենամեծ արժանիքն այն է, որ նրա հեղինակը՝ ժողովրդասեր բանաստեղծը, կապված լինելով կյանքի հետ, տեսնում է նաև հասարակական տարբեր խավերի ներկայացուցիչներին իրենց գործի, միջավայրի, դասային հարաբերությունների ոլորտներում, ճանաչում է մարդուն, բանական, բարձրագույն գոյին իր միջավայրի, կենցաղի, աշխատանքի որոշակի ոլորտում։ Առաջնորդվելով Դավիթ Անհաղթի «իմաստասիրութիւն է ճանաչումն գոյից» փիլիսոփայությամբ, նա դիտում է մարդկանց գործնական հարաբերությունների մեջ, ճանաչում է տկարին, աղքատին, զրկվածին, խեղճին, ընկածին, անզորին, թույլին, սիրում, կարեկցում է նրանց, պաշտպանում նրանց շահերն ու իրավունքները, ճանաչում է նաև մեծատուններին, իշխանավորներին, եկեղեցու պաշտոնյաներին, կեղծ բարեպաշտներին, շողոքորթներին, կաշառակերներին, ընչաքաղցներին, ծույլին, անբանին՝ անարգում, պախարակում, դատապարտում նրանց։ Այս առումով Նախիջևանցու աղոթամատյանի մի շարք հատվածներ՝ «Աղօթք թագաւորաց», «Աղօթք առաջնորդաց», «Աղօթք աստիճանաւորաց», «Աղօթք քահանայից», «Աղօթք վարդապետաց», «Աղօթք ծերոց», «Աղօթք նեղելոց», «Աղօթք դպրաց» և այլն, պատմական իրականության ճշմարիտ արտացոլման օրինակներ են։

Եկեղեցու կեղծ նվիրյալը, իր իսկ մեղքով, զգացական ախտին ենթարկված, չի նկատում թե որքան խորանում է վիհը իր կյանքի և քարոզած դավանանքի միջև։ Նա կարգված է իբրև դաստիարակ մանկանց և երիտասարդաց, նրա սուրբ պարտականությունն է տալ նրանց «զիմաստ գործնական և տեսական», բայց նա, արհամարհելով առաքյալների կենդանի օրինակները և սուրբ ուսմունքը, դառնում է տիպարն անբարոյականության և, կորցնելով բանական մարդու պատկերը, հավասարվում է «անբան անասուններին»։ Նախիջևանցին այդպիսիներին անվանում է հասարակության ցեց, չարիք.

Ի տես ռամկաց գրապանս լայնեմ,
ելեալ շքեղ քղանցս երկայնեմ.
Յառաջագահ գոլ ի յընթրիսս սիրեմ,
և ռաբբի կոչիլ յամկաց ախորժեմ (էջ 145բ)։

Ձևի և բովանդակության, գաղափարի և իրական գրության ներհակությունն է անհանդստացնում բանաստեղծին։ Ներքնապես բարոյալքված եկեղեցականը ի տես ժողովրդին կատարյալ կրոնավորի կեցվածք է ընդունում, ձևանում սրբակյաց, օրինապահ, գիտուն. իբրև «բարաբան»՝ պահապան հայր, վերակացու, բազմում է ընթրիքի սեղանի առաջին շարքում («յառաջագահ»), փառամոլությամբ ընդունում է «ռաբբի» կոչումը, զրով ժողովրդին մատնացույց է անում արքայության, ճշմարտության ճանապարհը, իսկ ինքը գործում է ճշմարտությանը, «զրով ավանդյալին» ներհակ, ընդդեմ.

Զոահ արքայութեան ծանրացուցանեմ,
և զիս բարաբան նոցին ցուցանեմ.
Ընդ անցուկ շաւիղս ես ո՞չ մտանեմ,
յուսով դիմողաց դրունսն փակեմ.

Մանկունս եկամուտս ինձ աշակերտեմ,
  և բան զիս յամտ գնենէն առնես.
Հայս աշխարհի մժղուկս քամեմ,
  իսկ յառանձնութեան զուզտս կլանեմ...
Յատեանս ելանելս լոյս Հառագայթեմ,
  իսկ ի դուրս դիսելս մառախուղ ցնդեմ...
Դեղով քո բանից հիւանդս բուժեմ,
  իսկ նետիւք գործոյս անդրէն խոցոտեմ.
Բարմամբ բառդից դմայլեցուցանեմ,
  դդայութեամբ գործոյս իմ ապականեմ... (էջ 145բ)։

Անցյալ դարերի կրոնական բանաստեղծության մեջ մեզ հայտնի չէ քընանդատական այսքան սպառիչ խոսք եկեղեցու կեղծ առաքյալների նկատմամբ։ Պ. Նախիջևանցին գեղագիտորեն խտացնում է գույները, ո՛չ մի գիծ, ոչինչ դուրս չի մնում ախտավոր, անբարեպաշտ մարդու հոգեբանությունը ներկայացնելու նրա արվեստի մեջ։ Ահա նաև մի այլ ցցուն նկարագրություն, ուր կերպարանավորվում է անարժան վարդապետը.

Ո՛չ իբր առաջնորդ ի կենաց ուղին առաջնորդեցի,
  այլ՝ իբր գիշերդ ի խորխորատս ներքին ընկեսցի.
Ո՛չ իբրև զՀայր բաղցրադութ եղեալ խնամավ խրատեսցի.
  այլ՝ իբր գրոնունս խստասրտութեան յուսահատեսցի.
Ո՛չ իբրև դրաջ և հսկող դանձն իմ առ հօտին եդի,
  այլ՝ իբր գվարձկան ի գիմել գայլոցն զփախուստ առի.
Ո՛չ իբրև զդէտ արթուն ըզգայուստ չարի զեկուցի,
  այլ՝ իբր զկուռ յարձակիլ հինին պապանձեալ կացի...
Ո՛չ իբրև զտեսուչ յաւուրս մառախլոյ զդուշ պահեսցի,
  այլ՝ իբր տարտամ, տառապարտարօտ անկեալ նիրհեցի.
Ո՛չ իբրև զլուխ կենդանի զանդամս առողջ պահեսցի,
  այլ՝ գոլով մեռեալ նեխութեան վարուք ապականեսցի... (էջ 147բ—148ա)։

Անտարբերությունը, վնասակար ներանձնությունը խեղանդամ է դարձնում մարդուն։ Եկեղեցու ինքնասիրահար սպասավորը մոռանում է ժամն ու պատարագը, աղոթքն ու շարականը, ուսումն ու խրատը, վայր է դնում բոլոր գենքերը, կամովին հանձնվելով ծուլության ախտին։

Նախիջևանցուն անհանգստացնում են ժամանակի հայ եկեղեցականության միջավայրում իշխող քաղաքացիական ոգու, արիության բացակայությունը, հավատքի դինվորի անշունչ, անկենդան կացությունը, նրա բարոյական վայրէջքի ախտոր փաստերը։ Ընթերցողը մտովի տեղափոխվում է XVIII դար։ Թվում է, թե նա տեսնում է հայ եկեղեցու շոշափելիորեն անկենդան պատկերը, լսում նրա նվազուն, անկյանք ժամերգությունը, տարտամ, ձանձրալի, ակամա արարողությունները, երգի ու շարականի խամրած, բեկբեկվող հնչյունները։

Հայ եկեղեցու անարի «ինքնահոժար, փառամոլ զինվորը», շրջանցելով դարավոր սովորույթներով ժառանգված ծիսական կարգն ու կանոնը, տգիտության, բռնության դեմ մաքառելու իր իրավունքը, ինքն է դառնում բռնակալ, խավարամիտ, ուսումնահալած.

Չեմս առեալ զկարգ տեսչութեան,
  չեմս առեալ կարիս բնութեան...
չեմս հաղտել ախտին բռնութեան,
  չեմս կրթեալ յառս գործնական,
չեմս վարժեալ իմաստ տեսական,
  չեմս տիրեալ կրից բարկութեան
չեմս եղեալ կառաւար մի տան... (էջ 147բ)։

Ամենամեծ առաքինությունը՝ բարությունը, սերն է դեպի անպաշտպան ժողովուրդը. ամեն մի բանական արարած՝ թագավոր թե իշխան, հոգևոր առաջնորդ, աղքատ թե մեծատուն, օժտված պետք է լինի այդ սիրով։ Բայց բանական, շնչավոր, մեղսագործ էակը գոնե բարեգործությամբ քավել կարողանար իր մեղքերը, գեթ ծերության օրերին ետ կանգներ վնասակար ճանապարհից։ Ո՜չ, ցավով հիշատակում է բանաստեղծը, մեղսագործը «ծաղկեալ ալեաց» մեջ էլ գերի է մնում իր անձին.

Եւ զի՞նչ արարիցս,
զի և ոչ գէթ ի միում
բարեգործութեանց
ծաղկէլ ալեացս հաստատուն կացի (էջ 26բ)։

«Իշխողն ալոց, պարտի նախ իշխել անձին»,— հիշեցնում է Նախիջևանցին Սողոմոն թագավորի իմաստուն խոսքը.

Զարթո զաչս իմ զիմացական յայիլ յիս
և իմանալ զտգեղութիւնս.
և ճանաչել զչափ անձին իմոյ...[9]։

Տո՛ւր ինձ բանականի ուժ և կարողություն, իմաստություն, զորություն, աղերսում է բանաստեղծը, պաշտպանելու ճշմարտությունը, արդարությունը, բարին, պատժելու չարին, գնահատելու ամեն մեկին՝ իր արժանիքներին համեմատ.

Ուստ՝ ինձ, տէ՛ր զիրաւունս քո,
արդարաբար կեալ առ ամենայնսն.
հատուցանելով իւրաքանչիւրում ըստ արժանեացն...
Ողորմելով նոցա, որք ունին կարիս ողորմութեան,
հատուցանել զփոխարէն նոցա, որք ինձ երախտաւորք գտան։
և շնորհակալ լինելով զբարերարացս,
պահպանելով զապահովութիւնս իմ,
և զպատիւ կարգի, կոչման իմոյ.
Խոսելով զճշմարտութիւն և զգուշանալով ի ստութենէ...
ցմահ ճգնելով վասն արդարութեան...
ո՛չ աչքն առնելով աղքատի և ո՛չ հարստի.
պատուելով զբարիս և պատժելով զչարս... (էջ 121ա)։

Նախիջևանցու պոեմի արվեստի բարձրակետը կարելի է համարել «Աղօթք թագաւորաց» գլուխը։ Այստեղ շոշափելի է ընդհանրացված մի հայացք, որով սվելի քան բարձրանում է «Աղօթական բանք» մատյանի գաղափարական արժեքը։ Թագավորի աղոթքի միջոցով բանաստեղծը մարմնավորում է ատելություն առհասարակ բոլոր տիրողների, իշխողների, բռնակալների նկատմամբ։ Ինչպիսին պետք է լինի ժողովրդի ղեկավարը, առաջնորդը, թագավորը և ինչպիսին չէ, տարաբախտաբար։ Անշուշտ, այստեղ էլ հեղինակի ելակետը նույն հոգու և մարմնի հարաբերությունների կարգավորման հարցն է։ Բայց այս հիմքի վրա նա կենսական, քննադատական այնպիսի դիտողություններ, իրական, հոգեբանական այնպիսի վերլուծումներ է անում, որոնց մեջ մարմնավորում է բոլոր ժամանակների վատ թագավորներին, իշխաններին, անաշխատ, շահագործող դասերի ներկայացուցիչներին։ Աղոթքի մեջ ցոլանում են ժողովրդի հարստահարիչների պատկերները.

Բայց ես իշխեմ յաղթից իմոց,
և միտն իմ հրապարակական բաղձանօք մարմնոյս
իբրու մաղնեստիս վիմով օձեցեալ,

9 ՄՄ, ձեռ. № 6532, էջ 165բ։

յորս կոյս և դառնամ ըստ կողմնացոյցի դիտել առ Մարմինս,
բմբռնեալ զոյով նմանել՝ որպէս ձուկ ի խայծէ... (էջ 150ա)։

Մարմնին դերի թագավորի դերին է դառնում մի ամբողջ ժողովուրդ։ Հենց այս հիմքի վրա են բացահայտվում տնտեսական-հասարակական, դասային անհավասարություններն ու հակամարտությունները և հենց այստեղ էլ առավել ցայտուն է դառնում բանաստեղծի ժողովրդասիրությունը.

ուստի զսա՛ման թագաւորութեան ի բաց եղեալ,
մեծարելով դախտս և զորովայն.
ի լրումն անրաւ բաղձանացս՝
զրոնաւորի զոնցայ զկերպարանս։
Եւ իբրև զդալ արարացի յարձակեցայ ի յոտ հշխարաց.
Եւ իբրև զբաղդեալ խրոխտ առիւծ, բուռն եղէ ազգի տնանկաց.
Եւ իբրև զծարաւի արեան, ծծեցի զկեանս աղքատաց.
Եւ իբրև զխստասիրտ արծիւ սլացայ ի խումբս կաքաւաց.
Եւ ի վերա այսր բազմախուռն ախտիւք յորացեալ... (էջ 150բ)։

Ժողովրդի առաջնորդը,— զժգոհում է բանաստեղծը,— փոխանակ հայրարար, արդարությամբ դատելով, «իրաւանց շրթմամբ հովվելով զզրոյն», փոխանակ մտահոգվելու «զկենցաղոգուտ իշխանութեամբ տնտեսաւորել» իրեն վստահված երկրի կյանքը, փոխանակ «իշխանաբար զբարիսն պատուելով և զչարսն պատժելով» կառավարելու իր ժողովրդին, ընդհակառակն, իբրև ամենակուլ գազան, իբրև «գայլ արաբացի» հոշոտում է իր անպաշտպան, աղքատ ժողովրդին։

Բանաստեղծը երազում է ժողովրդասեր, «ազգիս տնանկաց» շահերի պաշտպան, կենցաղաղետ, կատարյալ կառավար, բանական առաջնորդ։ Խորին ատելությամբ է բնութագրում իր սահմանը չճանաչող, մարդու դատին անտարբեր իշխանավորի անհատականությունը։ Թվում է թե նա ներկայացնում է պատմական, ապրող, գործող, իրական մի անձ։ Մենք չենք տարակուսում, որ բանաստեղծի հայրենի երկրի՝ Նախիջևանի գրավման ահեղ դեպքերը (որոնց ականատեսն է եղել բանաստեղծը), Թահմազ կուլի խանի գազանարարո դատաստանը հայ անմեղ ժողովրդի նկատմամբ և այլն, կարող էին նյութ տալ հայրենասեր երգչի աղոթամատյանին։ Հիրավի, Նախիջևանցին հոգևորական մեծ վարպետությամբ է բնութագրում «հորացեալ», «ուխտադանց», «ըշնախոհ», «սրբապիղծ», «գայլ արաբացի», «արեան ծարաւի» թագավորի հավլաքական կերպարը.

Ո՛չ իբրև զաւոր մատնոհ լինիմ արդար իրաւանց,
ո՛չ և զուն գործեմ կորզել զորբս, այրիս ի ձեռաց բռանց,
այլ անիրաւ առեալ ըստ անիրաւին զդատաստանաց,
ի յառաւոտ-ցերեկոյ հրճուիմ ներ զրօսանաց (էջ 150ա)։

Հողու և մարմնի հակամարտությունների պայքարի հարցը աղոթամատյանում ընկվում, մեկնաբանվում է ներքին լայն հենքի վրա։ Բանաստեղծը այն ընկալում է իբրև հավատքից շեղված անհատի և հասարակության միջև գոյություն ունեցող հակասությունների դրսևորում։ Ըստ բանաստեղծի բանական արարածը պետք է լինի լուսավոր, արդարադատ, իմաստասեր, եղբայրասեր, պարկեշտ, բարի, գթասիրտ, խոհեմ, երկյուղած, մարդասեր, միաժամանակ՝ զորավոր, քաջամիտ, արիասիրտ։ Մարդկային բարձր այս արժանիքները վեր հանելու, խրախուսելու նպատակներ է հետապնդում Նախիջևանցին իր ամեն մի աղոթքում...

Ընթերցողին զարմանք են պատճառում հեղինակի դիտողական, ճանաչողական առանձնահատուկ շնորհը, երևույթների հոգեբանական վերլուծության, նուրբ դիտողականության արվեստը։ Այդ արվեստի՝ իբրև հայելու մեջ ցոլանում է երգչի անհուն և անթաքուստ սերը դեպի մարդ արարածն առհասարակ և դեպի ազգային եկեղեցին, հավատքն ու հայրենիքը։ Հիրավի, սերը

դեպի իրական կյանքը, հավատքի շաղախով. սքեմավոր բանաստեղծի աղոթամատյանում շատ խորն ու տարածուն արմատներ ունի։ Կենսասիրությունն է այն կրակը, որ ներքնապես բորբոքում է հավատացյալ բանաստեղծի երևակայությունը և լուսավորում նրա ճանապարհը։ Երգիչը հազար ու մի թելերով կապված է կյանքի, ժողովրդի հետ, որքան էլ որ իբրև սրբակյաց այն միակողմանի հայացքն է զարգացնում, թե՝ ծայրահեղ աշխարհասիրությունը շեղում է մարդուն աստվածային օրենքներից։ Բայց հաճախ բանաստեղծը հենց աշխարհասիրության վնասակար հետևանքները ներկայացնելիս ցուցաբերում է բուռն կենսասիրություն։

Եւ հրաժարեալ գոլով յաշխարհէ,
նովին հոգովք միշտ տարաբերիմ.
եւ միայն գոլով մէնացեալ,
ո՛չ դագարին երբէք ծփունքն իմ.
եւ ցաւատեն միտս ցանկութեան
այսր աշխարհի փուշ և բորկորն իմ... (էջ 37բ)։

Նախիջևանցու արվեստն ունի մի այլ ուշագրավ հատկություն։ Կենսասեր երգիչը ի վերջո անդրադառնում է նաև իր անվերջանալի ողբին, զգալով, որ լացն ու կոծը, սուգը թույլ միջոցներ են իր անհուն ցավերի դիմաց...

Եւ, արդ, ո՞վ անձն իմ ամենամեղ, արժանապարտաւ և գորովելի.
մինչև յե՞րբ զբազում բանիւք անկանիս.
մինչև յե՞րբ դիմակս կերպից ողբոց շարադրես...
մինչև յե՞րբ յանգոյն երեմեայ հաշիս, յառաչես.
մինչև յե՞րբ ի հոգս վարանման անկեալ դեգերիս.
մինչև յե՞րբ ժամ այցելութեան քո ոչ ճանաչես... (էջ 132բ)։

Ո՛չ միայն ողբ, լաց ու հեկեկանք, այլ խինդ ու հույս, գիտակցական զըղջում, խոստովանություն, մեղքերի և սխալների թողություն... Ապաշխարությունը, ըստ երգչի, «ցաւ է ի վերա հանցանաց», իսկ դրա համար անհրաժեշտ է գործով հատուցել թերացումների, մեղքերի դիմաց։ Գործով վճարել, գործով շտկել սխալներն ու թերությունները։ Ապաշխարությունը պետք է մարդուն մղի դեպի գիտակցված պայքարի և ոչ թե համատեղության։ Ուստի բանաստեղծը հաճախ զղջում է, որ իր նշանաբանն է դարձրել «կոծապարուրի» և ողբասացի կերպարանք ընդունելը.

Վա՛յ ինձ, յաւուր յայնմիկ.
եւ քանզի անօգուտ է ինձ սուգն, որ անդրէն աստէն ողբացից...
եւ կոծապարուրս զաշխարհ ամենայն,
եւ ես (ի կոծել զողորմագին բեկումն հոգւոյս)
նոցին պարուցն գտայց պարակից.
առ անհնարին հարուածոց անձինս,
բարբառ արձակեալ մեծաձայն լացից.
զնօրինութեան աղխիւք կարկացեալ,
բերանս ողջմամբս բացից...
զամենայն դիշեր, որպէս զԴաւիթ,
անդուլ հառաչմամբ զանկողիս թացից (էջ 18ա)։

Հիրավի, ողբն ու սթափումն է XVIII դարի վերանորոգվող և զարգացող կրոնական բանաստեղծության հիմնական ոճը։

Ընթերցողը միշտ լսում է այն ներքին ձայնը՝ թե մենք ենք մեղավոր մեր թշվառության, մեր դառն աղքատության, օտարի լուծը կրելու համար...

Զի մեր չարեաց մեք եմք պատճառ,
իսկ բարեացն այն, որ անճառ[10]։

---

10 ՄՄ, ձեռ. N 6532, էջ 2բ։

Թեև մեծ է մեր մեղքը (սխալը), բայց օգնի՛ր, տեր,— աղերսում է բանաստեղծը,— տո՛ւր, վերադարձրո՛ւ մարդ-բանականին իր սահմանը և նա կկարողանա ազատագրվել իր գերության շղթաներից։

Համամարդկային ընդհանուր ցավերից դեպի աղգայինը, որոշակին. վերացականից, երկնայինից դեպի իրականը, առարկայականը. աստվածաբանականից դեպի ճշմարիտ փիլիսոփայականը՝ ներքին այս շրջագծերում են հասունանում Պետրոս Նախիջևանցի բանաստեղծի հայացքները, գեղագիտական ըմբռնումները։ Այս ընթացքի մեջ, բանականության, հոգու իշխանության. դգայականի և իմացականի ներդաշնակության հարցերը աստիճանաբար կարգավորվում են, աղոթքի կենսական նստվածքը թանձրանում է, նպատակակետը բացորոշվում, աղոթքը արձագանքում է հայ ժողովրդի կրոնաազգային ցավերին, կրոնաքաղաքական պայքարի հարցերին. կենսագործիր ինձ, խրատացրու ականջս, որ չլսեմ մահվան հրամանդ, նորից վառիր հանգած ճրագս, վերացրու տառապանքներիս լուծը, կանաչեցրու չորս,— թախանձում է բանաստեղծը.

Մի՛, իրրու տիղաւ առ իս շարժեսցի,
մի՛ նետք կայծակաց առ իս տեղացի... (էջ 9ա)։

Լո՛յս, տուր աչացս արփւոյն նման,
պարել զերկրաւս իմ մարմնական,
յո՛յց և որպէս երագարան,
լուսաւորել խաւար գիմ տան.
խոցեա՛ զականս իմ պատուհան,
գի մի՛ մտցէ հրաւէր մահուան (էջ 63ա)։

Աղոթամատյանում պատկերների այլաբանական հաստ ծածկույթը աստիճանաբար վերանում է, ներքին ընթացքով զարգանում և ի վերջո բացորոշվում է XVIII դարում հայ ժողովրդի կրոնաազգային վիճակի և տնտեսական կյանքի հետ կապված երեք էական հարց՝ արտաքին թշնամուն, օտար բռնակալներին դիմագրավելու հարցը. ներքին կրոնադավանաբանական հակամարտությունները կասեցնելու. եղբայրության, միաբանության հարցը. աշխարհացրիվ հայ ժողովրդի հայրենադարձության խնդիրը.

Երկիւղ չիր՝ բաց ի դալ դիւաց,
և ի աղուէս հերձուածողաց.
հերքեա՛՝ զհոլս հերձուածողաց,
և փաղանգս դայլոց դիւաց (էջ 109ա)։

Վանի՛ր ինձանից, հեռացրո՛ւ արտաքին և ներքին թշնամիներին,— աղերսում է բանաստեղծը,— ազատի՛ր իմ ժողովրդին գայլերի փաղանգներից (դրրախմբերից, լեգեոններից) և աղգային հավատքը դրժողներից։ «Սէր եղբայրական ի հոգիս վառեա՛», «խստացեալ սիրտս սիրով քո ճմլեա՛»... Նախիջևանցին երբեմն աղոթքի մի քանի տողով ընդհանրացնում է գարի հայոց պատմական առանձնահատուկ իրադրությունը և ապա նույն աղերսագին մրրմունջներով առաջադրում այդ վիճակից դուրս գալու հնարավոր ուղիները.

Ա՛ռդ, հայցեմ ի քէն, տո՛ւր
եկեղեցւոյ քում զհաստատութիւն,
և մանկանց սրբոց՝ միաբանութիւն,
և հեստելոցն՝ ապաշխարութիւն,
և անհաւատից՝ լուսաւորութիւն...
և ազգին մերոյ վարատացելոյ՝ այցարարութիւն (էջ 162ա—բ)։

Գաղափարական այս առաջադրանքները աղոթաշարքերի ուղեկցությամբ հասնում են ընթերցողին հեռավոր, թույլ արձագանքներով, մեծ մասամբ այլաբանական հաստ ծածկույթով, երբեմն էլ զորեղ հնչյուններով, մարտական

հույզով։ Տեղ-տեղ աղոթամատյանը ընթերցողին համակում է պայքարի տրամադրությամբ, ներարկում է մարտական կիրք, ոգի, այն, ինչ տեսնում ենք բանաստեղծի «Երգ ի տօնի զինուորութեան» և նման երգերում։ Սոսկ հավատքը չէ որ մղում է երգչին աղերսելու երկնային թագավորին՝ «արի առնել ի հանդիսի մենամարտութեան».

Զօրացո՛ զիս Տէր, զօրութիւն իմ.
և զէն զինուորութեան իմոյ,
ի յանդէս մարտի, այսմ յատենի
արիապէս ճակատամարտիլ ընդ այսս չարութեան
և յաղթել քաջապէս օգոյս իշխանին յակառակութեան։
Զի դու ես օգնութիւն իմ ի պատերազմի...
գօտէորեալ համբերութեամբ,
սպառազինեալ խոնարհութեամբ,
և քաջազինեալ հոգով՝ սրտով,
մտեր կամաւ ի մարտ՝ նորագունին աշխարհ... (էջ 119բ)։

Կրոնական այլաբանության տակ պարփակված խոհերն իմաստական կերպարանք են ստանում նաև էջմիածնին նվիրված աղոթքներում, շարականներում։ Բանաստեղծը, վերստին և նոր ուժով բարձրացնում է Ստեփանոս Օրբելյանի «Ողբ ի դիմաց սուրբ կաթողիկէի» պոեմի ոգին։ Պետականազուրկ, օտար, այլակրոն նվաճողների բռունցքում սեղմված, աշխարհահալած հայ ժողովրդի համար էջմիածինը ստանում է հավաքական հայրենիքի իմաստ և նշանակություն։ Այս դիրքերից է նա անողոք քննադատության ենթարկում հոգևորական դասի «անարի զինվորներին»։

Վասն գի, դո՛ւ ես քաղաք ապաստանի առ քեզ դիմողաց,
Տապան փրկարար ի քեզ մտնողաց.
Երկին ապահով ի քեզ բնակողաց.
Կղզի անկասկած ապաւինողաց.
Աշտարակ հզօր, չարին երեսաց...
Մարտկոց արծաթի անխախտ ի դիւաց.
Պատնէշ ահաւոր, յերկիւղ թշնամեաց.
Աշտանակ ոսկի լուսատու մրտաց.
Տուն լցեալ բարեօք, լցիչ աղքատաց.
Վարժարան ընտիր գիմաստ սիրողաց...
Ատեան ահարկու բաբունապետաց...
Մագնիս սրտաքարշ հեռաւոր ազանց.
Լեառն բարձրացեալ ի վերայ լերանց.
Մեծ ուխտատեղի ի մէջ աշխարհաց... (էջ 137ա)։

Ի դեմս էջմիածնի բանաստեղծը ողբում է հայրենիքի կորցրած ազատությունը, նրա անօթևան որդիների սփյուռքն աշխարհով մեկ և հավաքականության պատգամ է հղում։

Ի մէջ լուսաւորաց ցանկալի արեզակն ես դու, սէ՛ր իմ,
Յաբեթական տոհմիս փարելի համայն լուսատու.
Ըզմիգախառն անձն իմ տարփալի, լուսաւորեա դու, սէ՛ր իմ.
Էջմիածին ծնօղ հոգևոր, մի՛ մոռանար զիս...
Ես՝ թափառի երգնակս, տար սրտովդ այրիմ արդ, սէ՛ր իմ... (էջ 138ա)։

Հայրենիքի վառ ու քնքուշ, խորն ու անապ սերն է պոռթկում Նախիջևանցու էջմիածնին նվիրված մի այլ ողբում.

Որպէս բղտաղավար մրրգապահաց եղեալք ամայի,
Կամ մենացեալ և տրտմութեամբ լցեալ սրգաւոր այրի.

Զորոց աղէտ մրտածելով, տոչորի սիրտս և այրի.
Վա՜յ և եղուկ մորս լուսոյ, զի եղէ արդ որդեզուրկ։

Սրբասաղոյց սրբատօրէ, պարիսպ նոցին պատառի,
Մուտրս դորձ, ոտից պրդձոց տանկաց խոզից ատտառի.
Ա՜յց, արա, տէ՛ր այգեստանեացս, զորս եղծեն էռիս վայրի.
Վա՜յ և եղուկ մորս լուսոյ, զի եղէ արդ որդեզուրկ[11]։

Բանաստեղծը սրտառուչ պատկերներով արտահայտում է հայ ժողովրդի սերն ու կարոտը իր հայրենի երկրի ծառ ու ծաղկի, վանքի ու հնությունների, նրա ազգային սրբությունների նկատմամբ.

Ո՛ւր է ինձ որն այն, յորում ի մէջ ադինանման վայրդ էեմէի,
Ցորում զկենարեր ծառոյդ քո պտուղ միշտ վայելէի...
Ցորում ի բարրաւ քաղցրախօս թռչնոցդ բերկրեալ ցնծայի...
Ցորում ըզփառս ի մէջ գիշերի նման երգէի... (էջ 136բ)։

Այսպես ուրեմն, Հայրենիքի և ազգային եկեղեցու ներդաշնակ սերն է «Աղօթական բանք» պոեմի ներքին խորհուրդը, շարժիչ լծակը։ Դա է երգչի բանաստեղծական բանքարի, նրա ողբի ու հառաչանքի, ապաշխարանքի, նրա մարի ու հավատքի ռացիոնալ հատիկը։ Ըստ բանաստեղծի, մարդու՝ բանական դրի, հասարակության ամենափոքր միավորի կատարելության խնդիրը (ամենակատարյալի օրինակով) կարևոր նախապայման է հայ ժողովրդի միասնության, հավատքի, հայրենիքի փրկության, նրա տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքի վերաշինության, վերանորոգության, զարգացման համար։ Գաղափարական այս միտումով Նախիջևանցին կապվում է ժամանակի հայ հասարակական մտքի առաջադիմ թևերի հետ։ Նրա քնարը համախոս է դառնում XVIII դարի նշանավոր բանաստեղծների՝ Պաղտասար Դպրի և Պետրոս Ղափանցու քնարին։

Մոռացված մատենագիր, մանկավարժ, ուսուցիչ, բանաստեղծ, փիլիսոփա Պետրոս Նախիջևանցին իրավամբ ներկայանում է իբրև հայոց հոգևոր վերանորոգվող բանաստեղծության ամենամեծ դեմքը XVIII դարում։

ПОЭМА «МОЛИТВЕННОЕ СЛОВО» ПЕТРОСА НАХИДЖЕВАНЦИ

Доктор филол. наук Ш. Л. НАЗАРЯН

(Резюме)

Поэма «Молитвенное слово» Петроса Нахиджеванци является значительным событием пробуждающегося армянского литературного движения XVIII века; движения, на спиралях которого усиливается интерес к мыслительному наследию армянских классиков, в том числе к «Книге скорби» Григора Нарекаци. Отличительной особенностью поэмы является свойственная ей критическая направленность. От абстрактного, неземного к действительному, предметному, от божественного к научному, философскому—вот ступени развития, созревания художественных взглядов поэта. Поэма «Молитвенное слово» по-своему отражает вопросы национально-освободительной, религиозно-политической борьбы армянского народа.

---

11 ՄՄ, ձեռ. № 6532, էջ 193բ։